



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

16th May 2021

Bulletin 21/2021

Second Palm Sunday

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 23:12-35

Երբ առտու եղաւ, Հրեաներէն ոմանք միաբանեցան եւ նզովեցին իրենք զիրենք, ըսելով թէ ո՛չ պիտի ուտեն, ո՛չ ալ խմեն՝ մինչեւ որ սպաննեն Պօղոսը: Այս երդումը ընդունելով՝ քառասունէ աւելի էին: Անոնք գացին քահանայապետներուն ու երեցներուն, եւ ըսին. «Սաստիկ նզովեցինք մենք մեզ, որ ո՛չ մէկ բան ճաշակենք՝ մինչեւ որ սպաննենք Պօղոսը: Ուստի դուք հիմա՝ ատենանք ինձ խնդրանք յայտնեցէք հազարապետին, որ վաղը իջեցնէ զայն ձեզի, իբր թէ կ'ուզէք աւելի ճշգրիտ տեղեկութիւն ունենալ անոր մասին. իսկ մենք՝ անոր մօտենալէն առաջ՝ պատրաստ ենք սպաննել զայն»:

Բայց Պօղոսի քրոջ որդին՝ լսելով այս դարանակալութիւնը՝ գնաց, մտաւ բերդը, ու պատմեց Պօղոսի: Պօղոս ալ կանչեց հարիւրապետներէն մէկը եւ ըսաւ. «Տա՛ր այս երիտասարդը հազարապետին, որովհետեւ լուր մը ունի՝ տալու անոր»: Ան ալ առաւ զայն, տարաւ հազարապետին եւ ըսաւ. «Բանտարկեալ Պօղոսը կանչեց զիս ու խնդրեց՝ որ բերեմ քեզի այս երիտասարդը, քանի որ ըսելիք ունի քեզի»: Հազարապետը անոր ձեռքէն բռնելով՝ մէկդի քաշուեցաւ եւ հարցուց. «Ի՞նչ լուր ունիս՝ տալու ինձի»: Ան ալ ըսաւ. «Հրեաները միաձայնեցան թախանձել քեզի՝ որ վաղը ատենանք առջեւ իջեցնես Պօղոսը, որպէս թէ կ'ուզեն աւելի ճշգրտութեամբ հարցաքննել զայն: Բայց դուն մտիկ մի՛ ըներ անոնց, որովհետեւ անոնցմէ քառասունէ աւելի մարդիկ դարան մտած են անոր համար, եւ իրենք զիրենք նզոված՝ որ ո՛չ ուտեն, ո՛չ ալ խմեն, մինչեւ որ սպաննեն զայն. ու հիմա պատրաստ են, եւ կը սպասեն քու խոստումիդ»: Հետեւաբար հազարապետը արձակեց երիտասարդը՝ պատուիրելով անոր. «Ո՛չ մէկուն ըսէ թէ այս բաները յայտնեցիր ինձի»:

Ապա կանչելով հարիւրապետներէն երկուքը՝ ըսաւ. «Պատրաստեցէ՛ք երկու հարիւր զինուոր, եօթանասուն ձիաւոր ու երկու հարիւր գեղարդաւոր, որպէսզի երթան մինչեւ Կեսարիա՝ զիջերուան երրորդ ժամուն». նաեւ հայթայթեցէ՛ք զբաստներ, որպէսզի հեծցնեն Պօղոսը եւ ապահովութեամբ տանին Փելիքս կառավարիչին»: Նամակ մըն ալ գրեց՝ սա՛ տիպարին համաձայն.

«Կոզդիոս Լիւսիաս՝ պատուական Փելիքս կառավարիչին. ողջոյն»:

Այս մարդը բռնուած էր Հրեաներէն եւ պիտի սպաննուէր անոնցմէ. իսկ ես վրայ հասաւ զօրքերով եւ ազատեցի զայն, հասկնալով որ Հռոմայեցի է: Ուզելով զիտնալ պատճառը՝ որուն համար կ'ամբաստանէին զինք, տարի զինք անոնց ատենանք առջեւ, եւ զտայ թէ ամբաստանուած էր իրենց Օրէնքին վերաբերեալ հարցերու համար, բայց մահուան կամ կապերու արժանի ո՛չ մէկ յանցանք ունէր:

Երբ տեղեկացաւ թէ Հրեաները կը դաւադրեն այդ մարդուն դէմ, անյապաղ դրկեցի քեզի, պատուիրելով ամբաստանողներուն ալ՝ որ խօսին քու առջեւ անոր դէմ: Ո՛ղջ եղիր»: Չինուորներն ալ առին Պօղոսը եւ զիջերուան մէջ տարին Անտիպատրոս, իրենց հրամայուածին համաձայն: Հետեւեալ օրը՝ թողուցին ձիաւորները որ երթան անոր հետ, իսկ իրենք վերադարձան բերդը: Անոնք ալ մտան Կեսարիա, տուին նամակը կառավարիչին ու ներկայացուցին Պօղոսը անոր: Երբ կարդաց, հարցուց թէ ո՛ր գաւառէն է, եւ հասկնալով թէ Կիլիկիայէն է՝ ըսաւ. «Մտիկ պիտի ընեմ քեզի՝ երբ զան քեզ ամբաստանողներն ալ»: Ու հրամայեց որ պահեն զայն Հերովդէսի պալատին մէջ:

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

The Epistle of St Paul Acts 23:12-35

The Plot to Kill Paul

The next morning some Jews formed a conspiracy and bound themselves with an oath not to eat or drink until they had killed Paul. More than forty men were involved in this plot. They went to the chief priests and the elders and said, “We have taken a solemn oath not to eat anything until we have killed Paul. Now then, you and the Sanhedrin petition the commander to bring him before you on the pretext of wanting more accurate information about his case. We are ready to kill him before he gets here.”

But when the son of Paul’s sister heard of this plot, he went into the barracks and told Paul.

Then Paul called one of the centurions and said, “Take this young man to the commander; he has something to tell him.” So he took him to the commander.

The centurion said, “Paul, the prisoner, sent for me and asked me to bring this young man to you because he has something to tell you.”

The commander took the young man by the hand, drew him aside and asked, “What is it you want to tell me?”

He said: “Some Jews have agreed to ask you to bring Paul before the Sanhedrin tomorrow on the pretext of wanting more accurate information about him. Don’t give in to them, because more than forty of them are waiting in ambush for him. They have taken an oath not to eat or drink until they have killed him. They are ready now, waiting for your consent to their request.”

The commander dismissed the young man with this warning: “Don’t tell anyone that you have reported this to me.”

Paul Transferred to Caesarea

Then he called two of his centurions and ordered them, “Get ready a detachment of two hundred soldiers, seventy horsemen and two hundred spearmen ^b to go to Caesarea at nine tonight. Provide horses for Paul so that he may be taken safely to Governor Felix.”

He wrote a letter as follows:

Claudius Lysias,

To His Excellency, Governor Felix:

Greetings.

This man was seized by the Jews and they were about to kill him, but I came with my troops and rescued him, for I had learned that he is a Roman citizen. I wanted to know why they were accusing him, so I brought him to their Sanhedrin. I found that the accusation had to do with questions about their law, but there was no charge against him that deserved death or imprisonment. When I was informed of a plot to be carried out against the man, I sent him to you at once. I also ordered his accusers to present to you their case against him.

So, the soldiers, carrying out their orders, took Paul with them during the night and brought him as far as Antipatris. The next day they let the cavalry go on with him, while they returned to the barracks. When the cavalry arrived in Caesarea, they delivered the letter to the governor and handed Paul over to him. The governor read the letter and asked what province he was from. Learning that he was from Cilicia, he said, “I will hear your case when your accusers get here.” Then he ordered that Paul be kept under guard in Herod’s palace.



Paul before council

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 20:29-21:17

Երբ անոնք դուրս ելան Երիթովէն, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ անոր: Եւ ահա՛ երկու կոյրեր նստած էին ճամբային եզերքը. երբ լսեցին թէ Յիսուս կ’անցնի, աղաղակեցին. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի»: Բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք՝ որ լռեն, բայց անոնք ա՛լ աւելի կ’աղաղակէին. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի»: Յիսուս կանգ առնելով՝ կանչեց զանոնք եւ ըսաւ. «Ի՞նչ կ’ուզէք որ ընեմ ձեզի»: Ըսին անոր. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթալով դպաւ անոնց աչքերուն. իսկոյն անոնց աչքերը բացուեցան, ու հետեւեցան անոր:

Երբ մօտեցան Երուսաղէմի ու հասան Բեթփազէ, Ձիթենիներու լերան մօտ, Յիսուս դրկեց երկու աշակերտ՝ ըսելով անոնց. «Գացէ՛ք այդ ձեր դիմացի գիւղը, ու իսկոյն պիտի գտնէք կապուած էշ մը, եւ անոր հետ՝ աւանակ մը. արձակեցէ՛ք զանոնք ու բերէ՛ք ինձի: Եթէ մէկը բան մը ըսէ ձեզի, ըսէ՛ք. “Տէրոջ պետք են”, եւ իսկոյն պիտի դրկէ զանոնք»: Այս ամէնը կատարուեցաւ, որպէսզի իրազործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը.

«Ըսէ՛ք Սիոնի աղջիկին. “Ահա՛ Թագաւորդ կու գայ քեզի, հեզ եւ հեծած իշու վրայ, իշու ձագի՛ աւանակի վրայ”»:

Աշակերտները գացին, եւ ըրին ինչպէս Յիսուս պատուիրած էր իրենց. բերին էշն ու աւանակը, դրին անոնց վրայ իրենց հանդերձները, եւ նստաւ անոնց վրայ: Ահագին բազմութիւն մը փռեց իր հանդերձները ճամբային վրայ. ուրիշներ ճիւղեր կը կտրէին ծառերէն ու կը տարածէին ճամբային վրայ:

Եւ առջեւէն գացող ու իրեն հետեւող բազմութիւնները կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին: Օրհնեալ է ան՝ որ կու գայ Տէրոջ անունով: Ովսաննա՛ ամենաբարձր վայրերուն մէջ»:

Երբ ան մտաւ Երուսաղէմ, ամբողջ քաղաքը շարժեցաւ եւ ըսաւ. «Ո՛վ է ասիկա»: Բազմութիւնը ըսաւ. «Ա՛յս է Յիսուս մարգարէն՝ Գալիլեայի Նազարէթէն»:

Յիսուս մտաւ Աստուծոյ տաճարը, դուրս հանեց բոլոր անոնք՝ որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, եւ տապալեց յումայափոխներուն սեղաններն ու աղանի ծախողներուն աթոռները, եւ ըսաւ անոնց. «Գրուած է. “Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, բայց դուք աւազակներու քարայր ըրիք զայն»:

Կոյրեր ու կաղեր եկան իրեն՝ տաճարին մէջ, եւ բուժեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան անոր գործած սքանչելիքները, եւ մանուկները՝ որոնք տաճարին մէջ կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին», ընդվզեցան եւ ըսին անոր. «Կը լսե՞ս ի՛նչ կ'ըսեն ատոնք»: Յիսուս ըսաւ անոնց. «Այո՛, բնաւ չէ՛ք կարդացած գրուածը. “Երախաներուն ու ծծկերներուն բերանով զովաբանութիւն կատարեցիր”»: Ապա ձգեց զանոնք, գնաց քաղաքէն դուրս՝ Բեթանիա, ու կեցաւ հոն գիշերը:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 20:29-21:17

Two Blind Men Receive Sight

As Jesus and his disciples were leaving Jericho, a large crowd followed him. Two blind men were sitting by the roadside, and when they heard that Jesus was going by, they shouted, “Lord, Son of David, have mercy on us!”

The crowd rebuked them and told them to be quiet, but they shouted all the louder, “Lord, Son of David, have mercy on us!”

Jesus stopped and called them. **“What do you want me to do for you?”** he asked.

“Lord,” they answered, “we want our sight.”

Jesus had compassion on them and touched their eyes. Immediately they received their sight and followed him.

Jesus Comes to Jerusalem as King

As they approached Jerusalem and came to Bethphage on the Mount of Olives, Jesus sent two disciples, saying to them, **“Go to the village ahead of you, and at once you will find a donkey tied there, with her colt by her. Untie them and bring them to me. If anyone says anything to you, say that the Lord needs them, and he will send them right away.”**

This took place to fulfill what was spoken through the prophet:

“Say to Daughter Zion,

‘See, your king comes to you,

gentle and riding on a donkey,

and on a colt, the foal of a donkey.’”^a

The disciples went and did as Jesus had instructed them. They brought the donkey and the colt and placed their cloaks on them for Jesus to sit on. A very large crowd spread their cloaks on the road, while others cut branches from the trees and spread them on the road. The crowds that went ahead of him and those that followed shouted,

“Hosanna ^b to the Son of David!”

“Blessed is he who comes in the name of the Lord!”^c

“Hosanna ^d in the highest heaven!”

When Jesus entered Jerusalem, the whole city was stirred and asked, “Who is this?”

The crowds answered, “This is Jesus, the prophet from Nazareth in Galilee.”

Jesus at the Temple

Jesus entered the temple courts and drove out all who were buying and selling there. He overturned the tables of the money changers and the benches of those selling doves. **“It is written,”** he said to them, **“‘My house will be called a house of prayer,’^e but you are making it ‘a den of robbers.’^f”**

The blind and the lame came to him at the temple, and he healed them. But when the chief priests and the teachers of the law saw the wonderful things he did and the children shouting in the temple courts, “Hosanna to the Son of David,” they were indignant.

“Do you hear what these children are saying?” they asked him.

“Yes,” replied Jesus, **“have you never read,**

“‘From the lips of children and infants you, Lord, have called forth your praise’^g ?”

And he left them and went out of the city to Bethany, where he spent the night.



Triumphal entry of Jesus

FEAST OF ASCENSION OF OUR LORD JESUS CHRIST

The Armenian Church celebrates the Feast of the Ascension of Our Lord on the fortieth day (which coincides this year to 13th May) following the Feast of the Glorious Resurrection of Our Saviour Jesus Christ.

Following His Resurrection and defeat of death, Christ remained on earth for forty days, and continued to appear to His disciples. On the fortieth day, Christ is seen by His disciples for the last time. He blesses them and leaves them with instructions, after which He ascends into heaven.

Two of the Gospel writers, St. Mark and St. Luke, testify about Christ's ascension. There is also an account of it in the Acts of the Apostles.

Following a final meeting of Christ with the eleven remaining apostles, St. Mark writes, "So then, after the Lord had spoken unto them, he was received up into heaven, and sat on the right hand of God." (Mark 16:19)

St. Luke gives a little greater detail as he writes, "And he led them out as far as to Bethany, and he lifted up his hands, and blessed them. And it came to pass, while he blessed them, he was parted from them, and carried up into heaven. And they worshipped him, and returned to Jerusalem with great joy, and were continually in the temple, praising and blessing God. Amen." (Luke 24: 50-53)

But by far the most beautiful account of the Ascension can be found in the Book of Acts: "And when he had spoken these things, while they beheld, he was taken up; and a cloud received him out of their sight. And while they looked steadfastly toward heaven as he went up, behold, two men stood by them in white apparel; which also said, Ye men of Galilee, why stand ye gazing up into heaven? This same Jesus, which is taken up from you into heaven, shall so come in like manner as ye have seen him go into heaven." (Acts 1:9-11)

The hymn that is sung in the Armenian Church on Ascension Day mentions the miraculous event of Christ's Ascension into heaven and the descent of the Holy Spirit on the Apostles.

In the Armenian Church, the day of Jesus Christ's Ascension is also commemorated for another reason as well. On this date in 1441, the See of the Catholicosate of All Armenians was returned to its historical origins. Following a resolution of the National Assembly gathered in Vagharshapad, the Patriarchal See was relocated from the city of Sis in Western Armenia to the Mother See of Holy Etchmiadzin. Following his vision of Christ striking the ground with a golden hammer, St. Gregory the Illuminator had founded the Cathedral of Holy Etchmiadzin in 303. However, less than 200 years later, in 484, the Patriarchal See was forced to relocate, and for the next 1000 years, settled in various cities throughout Armenia. The decision to return the throne of the Catholicos to the Mother See of Holy Etchmiadzin was the fulfilment of a national dream for the Armenian people.

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆ

«Այա նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա եւ, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց: Եւ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից եւ դեպի երկինք էր վերանում» (Դուկ. 24.50:51):

Այս տարի Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը Մայիսի 13-ին է:

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը: Հարությունից հետո Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա և երևում առաքյալներին ու հավատացյալներին: Այդ ընթացքում Հիսուս իր վարդապետությունն է ուսացանում նրանց, իսկ վերջին հանդիպման ժամանակ օրհնում ու պատգամներ տալիս առաքյալներին, որից հետո համբարձվում է երկինք:

Քրիստոսի Համբարձման մասին վկայում են Ս. Մարկոս և Ս. Դուկաս ավետարանիչները, ինչպես նաև՝ «Գործք Առաքելոց»-ը: «Եվ ինքը՝ Տեր Հիսուս, նրանց հետ խոսելուց հետո, դեպի երկինք վերացավ և նստեց Հոր աջ կողմը» (Մարկ. 16:19): Հայ Առաքելական եկեղեցին Համբարձման տոնին հիշատակում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության Աթոռ Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելը:

Պատմության թելադրանքով 484 թվականից Հայաստանի տարբեր վայրերում հանգրվանած Հայրապետական Աթոռը 1441 թվականին Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ մեկընդմիջտ վերահաստատվում է լուսավորչահիմն Ս. Էջմիածնում: Ի հիշատակություն պատմական այդ օրվա՝ Ս. Էջմիածնում Համբարձման տոնի առթիվ մատուցվող Ս. Պատարագի ընթացքում Իջման Ս. Մեղանի առջև կատարվում է նաև Հայրապետական մաղթանք:

Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաև ժողովրդական հանդիսություններով և կոչվում է Ջանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ, ծաղիկ): Հնում Համբարձման օրվա տոնակատարությունները սկսվում էին չորեքշաբթի օրը: Կանայք այդ օրն անվանում էին «Ծաղկամոր կիրակի»:



Ծաղկամայրն ըստ ավանդության քրիստոնյա Վարվառն կույսն է, ով փախչելով կռապաշտ հորից՝ ապաստանում է Աշտարակի մոտ գտնվող Արայի լեռան քարանձավում: Հայրը հետապնդում է աղջկան, գտնում և սպանում նրան: Նահատակվելուց առաջ Վարվառն Աստծուն խնդրում է, որ ծաղիկ և կարմրուկ հիվանդություններ ունեցող մանուկները բժշկվեն իր անունով: Աստված կատարում է նրա խնդրանքը, և Վարվառնի բարեխոսությունը խնդրող ծնողների զավակներն ազատվում են այդ հիվանդություններից: Այդ քարանձավը դարձել է ուխտատեղի: Քարանձավի պատերից մշտապես ջուր է հոսում, որն ունի բուժիչ հատկություն: Ժողովուրդն հավատացած է, որ այդ ջուրը Վարվառն կույսի արցունքներն են:

Տոնը Հայաստանի տարբեր շրջաններում յուրովի է նշվում: Սակայն նախապես կատարվում է ծաղկահավաք: Տոնի ժամանակ ամենուրեք կատարվում է վիճակահանություն և պարզվում, թե տվյալ տարում որ աղջիկն է ամուսնանալու: Տոնի օրը ջրով լի կժերի մեջ գցում են ծաղիկների տերևներ և աղջիկներին պատկանող զանազան իրեր: Այնուհետև դեռահաս մի աղջկա հագցնում են հարսի զգեստ, վերցնում կժերը, ծաղիկները և շրջում տնետուն: Այս ամենը զուգորդվում է երգերով, կատակներով և հանգանակություններով: Հետո սկսվում է վիճակահանությունը. ում պատկանում է կժից դուրս բերված առաջին իրը, նրան մոտալուստ ամուսնություն է սպասվում: Կժից հանում են մյուս իրերը, որոնց տերերին խրատներ և բարեմաղթանքներ են բաշխվում:

Երկրորդ Ծաղկագարդ

Քրիստոսի Համբարձման տոնի հաջորդ կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկագարդը: Տոնի անվանումն առաջացել է Ս. Հարությանը նախորդող Ծաղկագարդի տոնի անվանումից: Վերջինս խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, երբ մարդիկ Տիրոջը դիմավորում էին փառաբանությամբ ու ցնծությամբ և արմավենու ճյուղեր սփռում Նրա առաջ:

Երկրորդ Ծաղկագարդն արդեն համբարձված Քրիստոսի՝ Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները: Ավանդության համաձայն՝ մի հրեշտակ ամեն օր այցելում էր վիրապում բանտարկված Ս. Գրիգոր Լուսավորչին: Մի օր նա բացակայում է: Հաջորդ օրը Ս. Գրիգորը, հարցնելով պատճառը, իմանում է, որ Համբարձման ժամանակ Հիսուս Քրիստոս անցել է հրեշտակների ինը դասերի միջով. ամեն տարի հրեշտակները տոնախմբում էին Տիրոջ Համբարձումը երկինք: Լուսավորչին այցելող հրեշտակը չորրորդ դասից էր, և Համբարձման չորրորդ օրը հրեշտակների այդ դասի տոնախմբության հերթն էր:

Second Palm Sunday

On the Sunday following the Feast of the Ascension of Our Lord, the Armenian Church celebrates “Second” Palm Sunday. The name of the feast has been derived from Palm Sunday, which precedes Easter. In the week leading up to His betrayal, crucifixion and resurrection, the “first” Palm Sunday symbolized the triumphant entry of Christ into Jerusalem where people met Him with great joy and glorified His Holy Name. The Second Palm Sunday is the commemoration of the triumphant entry of the Ascended Christ into the Heavenly Jerusalem, where the angels meet him with great happiness and delight.

According to tradition, during St. Gregory the Illuminator’s imprisonment in the pit, he was visited every day by the same angel. However, one day, the angel did not come. The following morning, St. Gregory inquires to the reason for his absence, to which the angel responds that during the Ascension, Christ had passed through the ranks of the Angels, and they celebrate that feast each year. The angel visiting St. Gregory was from the fourth class of angelic hosts, and thus, on the fourth day following the Ascension, his rank of angels commemorates and celebrates Christ’s Ascension to heaven every year.

St. Gregory of Datev, one of the greatest theologians of the Armenian Church, has a famous interpretation of this event. Prior to His Ascension, the ranks of angels, except for the lowest class, who served Christ during His earthly life, were not aware of Christ’s incarnation for the salvation of man. St. Gregory’s commentary states that when the Lord was passing through the ranks of angels, they were surprised and asked, “Who was that powerful king?” The angels accompanying Christ thus informed them. This dialogue of angels is presented in the Holy Bible, in the book of Psalms:

“Lift up your heads, O ye gates; and be ye lifted up, ye everlasting doors; and the King of glory shall come in.”

“Who is this King of glory? The LORD strong and mighty, the LORD mighty in battle.”

“Lift up your heads, O ye gates; even lift them up, ye everlasting doors; and the King of glory shall come in.”

“Who is this King of glory?”

“The LORD of hosts, he is the King of glory.” (Psalms 24:7-10).

The angelic dialogue is exhibited for us, when it is heard during the Divine Liturgy, as the deacon approaches the celebrant priest with the chalice during the Great Entrance (Verapehroom).

Second Palm Sunday is one more reminder of the Ascension of Christ and grants us the hope for ascending to heaven after our deaths and being in the bliss of God’s presence.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Արդ, ոչ ոք երկինք չի ելել, եթէ ոչ նա, որ իջաւ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքից էր» (Յովհ. 3:13):

Քրիստոսասեր եղբայրներ եւ քոյրեր,

Այս խոսքերը, որ Փրկիչն ասաց Իր մասին, թերեւս ամենից կարճ ձեւակերպումն ու բացատրությունն են այս օրուայ տօնի: Յիսուսի համբարձումը՝ երկինք բարձրանալը եւ Հօր աջ կողմը բազմելը մենք կարդում ենք Աւետարանների մէջ: «Ապա նրանց տարաւ հանեց մինչեւ Բեթանիա եւ, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց: Եւ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանուեց նրանցից եւ դէպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Յիսուսին եւ մեծ ուրախութեամբ վերադաձան

Երուսաղէմ: Եւ միշտ տաճարում էին, գովաբանում եւ օրհնաբանում էին Աստծուն» (Դուկ. 24:50-53): Մինչեւ այժմ էլ բազմաթիւ են մարդիկ, որոնք պնդում են, որ եթէ Քրիստոս համբարձում չառներ, երկրի վրայ մնար, շատ մարդիկ կը տեսնէին Իրեն, դարձի կը գային եւ տարածողը կը լինէին Իր յոյս հաւատքի: Անշուշտ առաջին հայեացքից գուցէ այս տեսակէտը թուայ շատ իրատեսական եւ խոստումնալից: Բայց Աստուած մեզանից ոչ պակաս ցանկանում է, որ հնարաւորինս շատ մարդ Փրկչի մասին գիտենայ եւ հաւատայ, աւելին՝ «Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկուեն եւ հասնեն ճշմարտութեան գիտութեանը» (Ա.Տիմ. 2:4): Գուցէ շատերին թում է, թէ Քրիստոս, համբարձուելով երկինք, հեռանում է մեզանից, դառնում անտեսանելի եւ հետեւաբար՝ առաւել երազային, ոչ իրական եւ դժուար հաւատալի: Պէտք չէ, որ մենք Աստծոյ սէրը մեր նկատմամբ կասկածի ենթարկենք այսպիսի պնդումով: Բայց, ի վերջոյ, Տիրոջ հետ յարաբերութեան հիմքն անկեղծ հաւատն ու վստահութիւնն է Նրա փրկագործ սիրոյ եւ կամքի նկատմամբ: Քրիստոս, մարմնաւապէս աշխարհում լինելու Իր ժամանակը լրանալուց յետոյ, վերադարձաւ երկինք ոչ թէ մեզանից հեռանալու, այլ մեզ աւելի մերձ ու մօտիկ լինելու համար: Կը հարցնէ՞ք ինչպէ՞ս. երկինք համբարձուելուց դեռ շատ առաջ Քրիստոս Իր աշակերտներին խօսեց Իր գնալու մասին, բայց շեշտեց, որ ուրախ պիտի լինեն դրա համար, քանի որ երկինք ելնելով՝ կ'ուղարկի Սուրբ Հոգին, որ կը գայ, կը յիշեցնի եւ կը սովորեցնի աշակերտներին ամէն բան: Մինչեւ Իր համբարձում Քրիստոս խօսեց եւ գործեց գերազանցապէս իրական միջավայրում՝ Հրեաստանում եւ Գալիլիայում, իսկ ամբողջ աշխարհին փրկութեան Աւետարանը տանելու պատուէր տուեց համբարձումից առաջ, ուղարկեց առաքելներին սովորեցնելու եւ մկրտելու բոլոր ազգերին եւ Աստծոյ զաւակներ դարձնելու մկրտութեամբ: Առաքելները մարդկային իրենց տկարութիւններով չէին կարող դա իրագործել, պէտքն ունէին Սուրբ Հոգով զօրանալու: Քրիստոս բացեց նրանց մտքերը, որ հասկանան Գրքերը, եւ ասաց նրանց. «Այսպէս պէտք է չարչարուէր Քրիստոս, յարութիւն առնէր մեռելներից երրորդ օրը, եւ քարոզուէր նրա անունով ապաշխարութիւն եւ մեղքերի թողութիւն բոլոր ազգերի մէջ՝ Երուսաղէմից սկսած: Եւ այս բաների վկաներ էք դուք: Եւ ահա ես ուղարկում եմ Ձեզ իմ Հօր խոստումը, իսկ դուք նստեցէ՛ք Երուսաղէմ քաղաքում, մինչեւ որ երկնքից զօրութեամբ զգեստաւորուէք» (Դուկ. 26: 46-49):

Մեր հաւատքի հիմքը Սուրբ Երրորդութեան դաւանութիւնն է, ուր ասում ենք, որ հաւատում ենք մէկ Աստծոյ՝ մեկ բնութեամբ եւ երէք անձերով: Յայտարարում ենք, որ անբաժանելի եւ միասնական է Սուրբ Երրորդութիւնը, եւ ուր Հայրն է, այնտեղ Որդու եւ Հոգու ներկայութիւնը կայ եւ հակառակը: Սուրբ Հոգու միջոցով մեզ հետ լինելը արտայայտուում է Մատթեոսի գրառած այն յատուածում, երբ Քրիստոս համբարձումից առաջ առաքելներին ուղարկելով այլ ազգերի մէջ քարոզելու՝ պատուիրում է յայտնել բոլորին, որ մինչեւ աշխարհի վախճանը Ինքը մեզ հետ է բոլոր օրերում (Հմմտ. Մատթ. 28: 20):

Համբարձման դրուագի նկարագրութեան մէջ ասում է, որ Քրիստոս օրհնելով երկինք ելաւ. «Ապա նրանց տարաւ հանեց մինչեւ Բեթանիա եւ, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց: Եւ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանուեց նրանցից եւ դէպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Յիսուսին եւ մեծ ուրախութեամբ վերադարձան Երուսաղէմ: Եւ միշտ տաճարում էին, գովաբանում եւ օրհնաբանում էին Աստծուն» (Դուկ. 26: 50):

Համբարձման տօնի պատգամն ու դասը առաքելների օրինակի մէջ է խտացած: Մենք էլ իրենցից պէտք է սովորենք Աստծոյ հետ նոր յարաբերութիւն, հոգեւոր եւ աղօթական նոր կենցաղաւարութիւն ունենալը.

- Համբարձումը երկրի վրայ Տիրոջ մարմնական ներկայութեան փառաւոր կնիքն է, որ մղում է երկրպագութեան: Առաքելների օրինակով մեզ էլ անհրաժեշտ է երկրպագել Քրիստոսին՝ երկնքի եւ երկրի Օծեալ Արքային,

- Ի հակադրութիւն մարմնաւոր արհեստական ուրախութեան՝ հոգեւոր ցնծութիւնն ունենանք, մեզ անբացակայ տեսնենք Տիրոջ տնից, ջերմութեամբ օրհնենք ու գովաբանենք մեզ յաւիտենական սիրով սիրած Աստծուն,

- Տիրոջ հետ մարմնական բաժանման տխրությունը յաղթած եւ Նրա խոստումին անվերապահ հաւատ ընծայող առաքեալների պէս մենք էլ վերադառնանք մեր երուսաղէմները՝ խաղաղութեան քաղաք եղող եկեղեցիները, հոգեւոր համայնքներն ու ծուխերը՝ իբրեւ այլեւս Քրիստոսով վերափոխուածներ, որոնք կեանքով են վկայում իրենց Փրկչին ու Աստծուն:

Եկէք մենք էլ առաքեալների հետ բարձրանանք Ձիթենաց լեռը, հոգու աչքերով գրանցենք այդ պատկերը, ուր “մինչ իրենց աչքերը յառած նայում էին Նրա երկինք գնալուն, ահա նրանց երեւացին սալիտակ զգեստների մէջ երկու մարդիկ, որոնք եւ ասացին. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում էք երկնքին. այս Յիսուսը, որ ձեր միջից երկինք վերացաւ, պիտի գայ նոյն ձեւով, ինչպէս տեսաք նրա երկինք գնալը» (Գործք 1:10-11):

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի համբարձումը աստուածային տնօրինութեան կարեւոր փուլի աւարտ եւ սկիզբ է միաժամանակ: Թող այն մեր կեանքում էլ հոգեւոր նորոգման կարեւոր փուլի մեկնարկ դառնայ:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

ԵԿԵՂԵՑՈՒ ԴՈՂԱՆՁՆԵՐԸ

Չանգի գյուտն արվել է դեռևս 4-րդ դարում Իտալիայի Նոլա քաղաքում: Բուն Հայաստանում առաջին անգամ Սբ. Հովհան Մանդակունի (5-րդ դար) իմաստասեր հայրապետն է հիշատակում զանգի մասին, որը, սակայն, ձեռքի զանգակ էր, ավելի ճիշտ՝ բոժոժ: Այն սովորական զանգակից տարբերվում է նրանով, որ ներքևի շուրթերն իրար են հպված՝ միայն երկու անցք թողնելով, ուր երկայթե փոքրիկ կտոր է լինում: Բոժոժները սովորաբար կաղնու մեծություն ունեն, որոնք գործածվում են բուրվառի շղթաների վրա ու քշոցի շուրջը յուրաքանչյուրի վրա տասներկու հատ, որոնք, ըստ Սբ. Գրիգոր Տաթևացու, խորհրդանշում են տասներկու առաքյալների քարոզչության աշխարհասփյուռ ձայնի տարածումը:

Երկար ժամանակ զանգի դեր է կատարել կոչնակը, որը տաշած ու հարթեցված, ուղղանկյուն կամ քառակուսի, բարակ փայտե տախտակ է: Շատ հազվադեպ պատահում են նաև քարե կամ մետաղե կոչնակներ: Սբ. Գրիգոր Նարեկացին դրան անվանում էր շերտ՝ փայտի կտոր: Չայն դուրս գալու նպատակով կոչնակին հարվածում են հատուկ փայտե մուրճով, որը կոչվում է «թակաղակ»: Մինչև Վանական Վարդապետը (13-րդ դար) կոչնակը հայ մատենագրության մեջ (Հովհան Մամիկոնյան, Հովհաննես Սարկավագ, Ս. Գրիգոր Նարեկացի, Ասողիկ, Արիստակես Լաստիվերոցի, Սբ. Ներսես Շնորհալի, Գրիգոր Դ Տղա) հայտնի էր «ժամահար» անվամբ՝ բաղկացած «ժամ» և «հար» («հարկանել») արմատներից: Պատահական չէ, որ ժողովրդական բարբառներում եկեղեցին հանախ անվանել են ժամ՝ սկիզբ առնելով եկեղեցու զանգերով օրվա ժամերը որոշելու հնամենի սովորույթից: Իսկ կոչնակին հարվածող կամ զանգը խփող եկեղեցական պաշտոնյան կոչվում է ժամկոչ: Չանգահարումը թեև ժամկոչի պարտականությունն է, բայց որևէ բարեպաշտ քրիստոնյա կարող է այն կատարել:

Կոչնակը հայոց աշխարհում կիրառվել է վաղնջական ժամանակներից՝ դեռևս Նոյ նահապետի կողմից: Նա նույն այդ փայտե կոչնակով դեպի տապան էր հրավիրում կենդանիներին: Իսկ երբ ջրհեղեղը վերջացավ, և տապանը հանգրվանեց Արարատի փեշերին, Նոյը կոչնակ հարվածելով տապանից դուրս կանչեց կենդանիներին:

Քրիստոնեության մուտքից հետո մի քանի դար անց կոչնակից դուրս եկած ձայնով սկսեցին մարդկանց հրավիրել եկեղեցի՝ ծիսական արարողություններին մասնակցելու համար, իսկ վանականներին՝ նաև վանքի սեղանատուն՝ ազդարարելով հաց ուտելու ժամը:

Ըստ Ստեփանոս Մալխասյանցի՝ մահմեդականների իշխանության ժամանակ, երբ



քրիստոնյաներին արգելված էր եկեղեցիների զանգահարությունը, ամեն առավոտյան ժամկոչը կոչնակ խփելով էր արթնացնում հավատացյալներին՝ հիշեցնելով աղոթքի ժամը: «Կոչնակ» բառը փոխաբերական իմաստով նշանակում է «ահագանգ», «ազդարարություն», «կանչ», «կոչ», «հորդոր»:

Կոչնակի կիրառությունն այսօր թեև սահմանափակված է, քանի որ դրա փոխարեն այլևս լայն տարածում են գտել եկեղեցու զանգերը, սակայն որպես հնամենի սովորություն՝ այն հանդիպում է հիմնականում ուղղափառ վանքերում (հույն, ռուս, սերբ, ևն), ինչպես նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայկական վանքում:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայկական վանքի փայտե կոչնակը

Կոչնակին երկար դարեր հարևանել է զանգը: Այն սնամեջ տանձաձև գործիք է, որի ներսում կախված է լեզվակը, իսկ վերևի մասում ունի կախելու հարմարանք: Չանգերի մասին հայոց մատենագիրները բավական աղոտ տեղեկություններ են հաղորդում: Դրանց մասին արժանահավատ ու արժեքավոր հիշատակումներ կան Սր. Ներսես Շնորհալի հայրապետի և Սր. Գրիգոր Տաթևացի վարդապետի երկերում:

Հայաստանում զանգերը լայն տարածում են գտել 10-րդ դարի երկրորդ կեսից, և այսօր էլ դրանք անբաժան են Հայոց եկեղեցու ծիսակատարություններից:

Պահպանված հայկական ամենահին զանգերը ձուլվել են 14-րդ դարում: Դրանք պատրաստել են հնչուն մետաղներ պղնձից և բրոնզից, իսկ Սր. Գրիգոր Տաթևացին վկայում է, որ զանգը ձուլելու ժամանակ պղնձին խառնել են նաև արծաթ՝ ձայնն առավել հնչեղ դարձնելու նպատակով: Հարկ եղած դեպքում զանգը, ինչպես և կոչնակը, ազդարարել են գույժեր (հիշենք 1907 թ. Խրիմյան Հայրիկի մահը, և այլն):

Չանգի ձայնը զարմանալի ազդեցություն ունի մարդու վրա. տխրության պահին այն թախծալից է, իսկ ուրախության պահին՝ հոգեպարար: Եկեղեցական ծիսակարգում զանգ օգտագործելու բուն նպատակն է ընդհանրական աստվածապաշտական արարողությունների ժամանակ հավատացյալ ժողովրդին եկեղեցի հրավիրելը: Եկեղեցու զանգը միաժամանակ խորհրդանշում է հրեշտակների փողը, որը հարություն առած բոլոր մարդկանց հրավիրելու է Աստծո ահեղ ու արդար դատաստանին (հմմտ. Հայտն. 8:2): Սր. Ներսես Շնորհալին այն անվանում է «գաբրիելյան փող»։ «Գաբրիելեան փողն գոչէ, սուրբք ամենայն անդր հաւաքին»:

Չանգ հնչեցնում են նաև ննջեցյալ բերելու, իսկ ավելի հաճախ՝ հայրապետական թափորի, առաջնորդի կամ բարձրաստիճան եկեղեցականի գալու ժամանակ: Վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը ողջ Հայկական լեռնաշխարհում ամենաերկարատև զանգահարումը կատարվել է 1918 թ.՝ Սարգսրապատի մայիսյան հերոսամարտի ժամանակ, երբ յոթ ցերեկ ու յոթ գիշեր անընդմեջ դողանջում էին Արարատյան դաշտի և մերձակա շրջանների հայկական եկեղեցիների զանգերը՝ ազդարարելով մահու և կենաց կոչվր: Հայտնի է, որ երբ ժողովրդի մեջ տարածվում էր ժանտախտ կամ համաճարակ, և վրա էին հասնում պատուհասներ, ապա եկեղեցու զանգերն անընդմեջ հնչեցնում էին, որոնց ձայների բարերար ազդեցությունը բուժում էր մարդկանց:

Խորհրդային Հայաստանի աստվածամերժության տարիներին առժամանակ լռեցին եկեղեցիները: Պատահական չէ, որ մինչ օրս Հանրապետության հրապարակի (նախկինում՝ Լենինի հրապարակ) ժամացույցի ժամերն ազդարարվում են եկեղեցական զանգերի ձայնով: Չանգի մասին հյուսված ավանդազրույցներից հետաքրքրական է Չանգեզուրին վերաբերող պատմությունը:

Սյունյաց աշխարհի Խոտ գյուղի մոտ գտնվող վանքը խոշոր զանգ ուներ: Ամեն անգամ երբ հեռվում թշնամի էր հայտնվում, այդ զանգը դողանջում էր, և Սյունյաց քաջերի զորքերն ընդառաջ էին դուրս գալիս թշնամուն ու հաղթանակում: Իսկ երբ Հայաստան արշավեց Լենկթեմուրը, նա կաշառեց մի դավաճան հայի, ով էլ կտրեց Սյունյաց աշխարհի նշանավոր զանգի լեզվակը: Սյունիքի վրա թշնամու հերթական հարձակման ժամանակ տեղի բնակիչները փորձեցին զանգը հնչեցնել և օգնության կանչել հայոց քաջերին, սակայն ոչինչ չստացվեց, և զանգը չդողանջեց՝ լեզվակ չունենալու պատճառով: Հուսախաբության մեջ պլուներգիներն իրար ասացին՝ զանգն իգուր է, զանգը գուր է, որի պատճառով էլ այդ երկրամասը կոչվեց Չանգեզուր:

Հնում զանգերն ունեին իրենց անունները, ինչպես՝ Հացի զանգն Անիում, Խաչքարի զանգը Ջուղայում, և այլն: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Մաշտոց» ծիսամատյանում զանգերը հատուկ օժման և օրհնության կարգ ունեն: Նախապես զանգը սաղմոսների երգեցողության ներքո լվացվում է ջրով, ապա՝ զինով: Կանոնի համաձայն՝ օժման կարգը կատարում է եպիսկոպոսական աստիճան ունեցող հոգևորականը՝ սրբալույս մյուռոնով օծելով զանգի շուրթի չորս կողմերը: Իսկ վերջում երեք անգամ քաշում են նորած զանգի լեզվակը և հնչեցնում այն՝ ի պատիվ Ամենասուրբ Երրորդության երեք անձերի: Այնուհետև հավատացյալները հնարավորություն են ունենում խոնարհվելու և համբուրելու օծված զանգը՝ որպես բարեպաշտական արարք:


Չանգերը ոգեշնչման աղբյուր են հանդիսացել նաև շատ գրողների, երաժիշտների ու արվեստագետների համար: Բավական է միայն հիշել Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» հոյակերտ պոեմը՝ նվիրված Մեծն Կոմիտասին: Չանգի խորհրդանշական պատկերն արտացոլված է հայ նկարիչ Վ. Պողոսյանի «Ռեքվիեմ 1915» և Եղեռնագություն» կտավներում: Չանգերի ներդաշնակ դողանջ կա հայ շատ կոմպոզիտորների գործերում:



Հայաստանի եկեղեցու զանգակը

Չանգի ձայնն ավելի հզոր ու զրնգուն դարձնելու համար անհրաժեշտ է, որ այն կախվի բարձր ու բացօթյա տարածքում: Հենց այս նպատակին էլ ծառայում են զանգակատները, որոնք սովորաբար կառուցվում են եկեղեցու հարևանությամբ կամ էլ եկեղեցու արևմտյան ճակատին կից (Էջմիածնի Մայր տաճարը, Տաթևի, Հռիփսիմեի վանքերը, և այլն), իսկ հազվադեպ նաև՝ հարավային ճակատին կից (Աղթամարի Սբ. Խաչ հռչակավոր եկեղեցին): Հայաստանում առաջին զանգակատները կառուցվել են սկսած 10-րդ դարից: Նշանավոր են հատկապես Գոշավանքի, Հաղպատի, Սանահինի զանգակատները:

Էջմիածնի Մայրավանքի զանգակատունը կառուցվել է 17-րդ դարում, որտեղ երկար ժամանակ հնչել է Տիբեթյան զանգը: Մայր տաճարի զանգակատան կեսում օծված Սուրբ Սեդան է կանգնեցված, ուր մինչև վերջին տարիները Հրեշտակապետաց տոնին Սուրբ Պատարագ էր մատուցվում:



*Սուրբ Էջմիածնի Մայր
Տաճարի զանգակատան
զանգերը*

Church Bell

Last Sunday, 9th May 2021 at the end of Divine Liturgy Service HG Bishop Hovakim consecrated an important bell, by washing it with wine, water and Holy Chrism. The bell was given as a gift to St Yeghiche Armenian Church by Mr Krikor Melkonyan to be placed at the altar.

St Yeghiche Armenian Church Parish Council would like to thank Mr Melkonyan for his heartfelt and generous gift. **Thank You**

ԱՂՕԹՔ

Զորութիւնների Տէր Աստուած եւ բոլոր արարածների Արարի՛չ, Քեզ են օրհնում բոլոր արարածները, քանզի յանուն Քո մեծ մարդասիրութեան հանցեցիր բնակուել մեր հայրերի մէջ, նրանց հետ խոսեցիր այն վկայութեան խորանից եւ լսելով նրանց աղօթքները՝ Մովսէսի ձեռքով սրբեցիր Քո սուրբ խորանի բոլոր իրերը արեան սրկսումով : Եւ այժմ, մեր Տէր Աստուած, առաքիր Սուրբ Հոգուդ շնորհները այս նիւթի վրայ, որպէսզի սա էլ դառնայ Քո սուրբ Եկեղեցու պաշտամունքի սպասների մաս:

Տո՛ւր, Տէ՛ր, սրա ձայնի ազդմանը շնորհն այս, որպէսզի բոլորը, երբ լսեն սրա հնչումը, զղջան իրենց սրտերում եւ դառնան իրենց չար խորհուրդներից եւ բոլոր անօրէնութիւններից, խնդրեն մեղքերի ներում եւ թողութիւն, եւ Դու Քո բարերարութեամբ լսես եւ ողորմես նրանց:

Տո՛ւր, Տէ՛ր, սրա ձայնի ազդմանը շնորհն այս, որպէսզի բոլոր նրանք, որ ախտաւոր հիւանդութիւնների կամ սատանայի արհաւիրքների մէջ լինեն եւ լսեն սրա հնչումը, յիշեն Քո ահաւոր եւ սքանչելի Անունը եւ ողորմութիւն խնդրեն, Դու լսես նրանց, թեթեւացնես եւ փարատես նրանց բոլոր ցաւերը:

Տո՛ւր, Տէ՛ր, սրա ձայնի ազդմանը շնորհն այս, որպէսզի բոլոր նրանք, որ վշտերի եւ այլ նեղութիւնների մէջ լինեն եւ լսեն սրա հնչումը, յիշեն Քո սուրբ եկեղեցին եւ Քո ահաւոր երկրպագութիւնը, եւ Քեզանից օգնութիւն խնդրեն, Դու լսես նրանց եւ փրատես նրանց նեղութիւններն ու տրտմութիւնները:

Տո՛ւր, Տէ՛ր, սրա ձայնի ազդմանը շնորհն այս, որ երբ ցասման կարկուտի ամպեր գումարուն եւ մարդիկ սրա հնչումը լսեն, յիշեն Քո բարերարութիւնը եւ Քեզանից խնդրեն իրենց յանցանքների ներումը, անդաստանների եւ բոլոր պտուղների պահպանութիւնը, Դու Քո բարկութեան հրամանի փոխարէն լսես նրանց եւ ողորմես, քանզի սովոր ես պաշտամունքի փոքր սպասքի միջոցով մեծամեծ սքանչելիքներ գործել: Եւ ինչպէս Երիքովի պարիսպը կործանեցիր եղջերափողերի հնչման միջոցով, այժմ էլ շնորհիր, որ այս հնչման միջոցով կործանուեն թշնամու բոլոր ամբութիւնները, որպէսզի կարողանանք օրհնել ամենօրինեալ Աստծուդ՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

4: Հոգեհանգիստ - Memorial Service

There is no memorial service this week at St Yeghiche Armenian Church

Your Donation to the church,

St Yeghiche Armenian Church Parish welcomes your donations for Easter Sunday prayers and your annual family membership contributions. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all your prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions.



Thank you. St Yeghiche Armenian Church Parish Council

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Բահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.